

## ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

Ես քո փառքին եմ իմ երգը ձօնում,  
 Դու իմ հորովել սիրող ժողովուրդ.  
 Դու ման ու գութան, նաղ ու նախարակ,  
 Դու հիւսուածք ու թել սիրող ժողովուրդ.  
 Դու ոսկի շաղախ, կիր ու կաւ թափող,  
 Հնձաններ արդար, կամուրջներ կապող,  
 Դու ներկ ու նաղաշ, սրինգ ու սափոր,  
 Գիր ու մազաղար պաշտող ժողովուրդ:  
 Դու հոգով հզօր, դու կամքով ամուր,  
 Անառիկ բերդի պատի պէս յամառ,  
 Բայց բարի երգեր լոկ անձրեւեցիր  
 Քո տաճարներում հազարակամար:

Ուր էլ նետեց ֆեզ ոճիրն անողոք,  
 Դու գտար քարեր, գտար մի բուռ հող  
 Ու խեղն պանդուխտի պարկի մէջ լքած,  
 Մի վերջին պատառ հացի փոխարէն,  
 Քո մատեանները տարար ուտեսող:  
 Ուր ոսք դնելու մի տեղ նարեցիր,  
 Պատեր շարեցիր, օշախ վառեցիր,  
 Եւ արուեստները քո սիրաշաղախ  
 Հրաբխեցիր ու հանճարեցիր:

Քարերը հիմ-հիմ՝ մատներով մաշած,  
 Ժայռերի վրայ ժանեակներ քաշած,  
 Դու սրտի խօսքեր ու սէր նաղաշած,  
 Դու դարեր անվերջ եռացող ու փակ,  
 Հալոցքը հոգուդ շէկ լեռների տակ,  
 Կսկիծն անճամբայ, կարօտն անյատակ,  
 Հրաբուխի պէս լոռղ ժողովուրդ:

Կործանումների քո ծուխն ու փոշին  
 Բոնեցին խորումկ երկիմք ու դարեր.  
 Բայց հանճարներիդ հրդեհը մարել  
 Ո՞չ ոսխներիդ տրուեց մոլեզնած,  
 Ո՞չ «պաշտպաններիդ» առաւել դաւոդ.  
 Կեղծաւորներից այն դարանակալ,  
 Եւ ո՞վ մի վայրկեան այրուեց քո ցաւով:  
 Ո՞ւմ են հարկաւոր փրփուրներ նառի  
 Եւ կարեկցանքի մուրացիկ բառեր՝  
 Դու ֆեզնով հզօր, ֆեզնով անառիկ,  
 Կործանումներով կոած ու կոփած  
 Հաւատ իմ քարել:

Կորող չքողեց իր կերպարանքով  
Ոչ մի բռնակալ, որքան էլ շանաց.  
Ու կանգնեցիր դու բիւր հազար անգամ,  
Ածխակոյտերից մարմարը հանած:  
Ու չը մարեցին ոչ մի լոյս անուն,  
Ո՛չ մի դաւադիր դիրք ու դարանից,  
Աստղեր ես անվերջ դու շատրուանում  
Հոգուդ հինաւուրց կրակարանից:

Յաւերժ հրաշաղ քո համաստեղով  
Քեզ աւագների կարգի մէջ դասած,  
Քո մի բուռ տեղով, դժուար ու նեղով,  
Ամէն ինչ տարած, ամէն ինչ տեսած,  
Մտի գարունով ու սրտի գեղով,  
Ծեղ հրթիռներով արեւին հասած,  
Արեւի նման շոայլ ու բարի,  
Հոգուդ մէջ բոլոր ափերն աշխարհի,  
Առանց խտրութեան ու խնայելու  
Գոհարները քո ցրող ժողովուրդ:

Հիմա հաւաքիր, հաւաքիր մէկ-մէկ  
Գոհարները քո բոլոր բագերից,  
Եւ հողագնդի բոլոր ծագերից  
Հիմա հաւաքիր, հաւաքիր մէկ-մէկ,  
Քո զաւակներին բռչող աշխարհով,  
Պեծ-պեծին տալով, կորչող աշխարհով.  
Քո զաւակներին խեղն ու թեւարեկ,  
Քո սիրուց հալչող, ֆեզամից կառչող,  
Եւ ֆեզ ուրացող քո զաւակներին:

Դու զաւակի խենք, դու որդու գերի,  
Մօր պաշտամունքի դու գերաստինան:  
Դու մեր կարօտի ծխացող հնոց,  
Աչքը հեռաւոր նանապարհներին.  
Պարզ հաղորդակից սրտարաց յաւէտ,  
Եւ անմեկնելի անթեղած ու զոց:

Քո հազարագոյն, քո հազարաքեւ  
Քարերն արցունենվ տամ-տամ ողողած,  
Քարէ կնիքներ քո նամքին բողած,  
Պատմութիւնը ողչ արիւնով տողած,  
Իմ բարէ դափնի կրող ժողովուրդ:

«Օրերի Խորքից»

ՄԱՐԶ ՄԱՐԴԱՐԵԱՆ